

**ՏԵՐ - ԱՎԱՐՔԱՆՆԻՐԵԱՆԸ** - Թիվվաեցւոց մոռաւոր կեանքը : Թիվիիշ, ապագան  
Յ. Մարտիրոսիան, 1886 :

**ՏԵՐ - ԱՎԱՐՔԱՆՆԻՐԵԱՆԸ** - Դասագիրք գծագրութեան, երկրորդ պատճեռթիշ,  
բարեփոխած և ճախացրած : Այելքանդրապօլ, Գէորգ Ստուցհենցի տպարան, 1887 :

**ՏԵՐ - ՊՈՒԱԽԱՌԺԷ** (Ֆութիւնէ) . Կէո բութամատ, վիպասանութիւն : Թարգու  
մանեց կ. Ա. իւթիւնան : Կ. Պօլիս, ի ապարանի Արևելք լրագրի, 1886 :

ԲՈՅՑԻՆԻ ԿԱՅՑԵԲ. երկրորդ հատուր . 1887 . Կէղբանական զրութեանունուց  
ՓԱԼԱԳԱՌԵԱՆԸ (Յ. Գ.) . Նախապատրաստառիան գալապիշը Աշխարհագրու-  
թեան, 1887 :

**ՓԱԼԱԳԱՌԵԱՆԸ**, Տեղագրութիւն Կոստանդնուպոլսց կամակացիք, բարեփոխած  
պատկերով Վասիլիք, 1887 :

**ՔՆԱՐԻՆ ՄԱՆԿԱԿԱՆԸ**, երգարան : Աշխատաբիրութիւն Վազգործ քահանուց  
Յովկէփեանի : Ա. Պետրովրազ, 1887 :

**ՕՆԻ (Ժարժ)**, Վիպասան գաղղացի . Դարձնոցուպեան կոմ. կենոց պայքարները:  
Թարգմանիչ Բ. Ա. Պօլտման : Հրատարակիշ Յ. Գրիգորյանիան : Կ. Պօլիս, 1887 :

## ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾՐՆԱՅ

**ԱԶԴ.** - Ալաջիկաց հմտությո յօդուածս քաղաքն եմք յընթացս Քրատարակու-  
թեան գտնուազ մասնենի մի, որ կը խօսի Հայկական Դամանի Շաբաթինու-  
թեանց վրայ, եւ է երկասիրութիւն լինարդ զեղմնակի Պատմութեան  
Հայկական ինն եւ նոր դպրութեանց :

**Ա. Յակոբ Մծրեայ և իր ազգուրիներ** : - Իրեն լեծայուած Զգօն զիրք : - Յ-Ա.  
Առանձինի և իր կարծիք այս զրոց վրայ : - Այրատատ, և երապական արցի բո-  
հուսիրուրեան կարծիք : - Իր անուամբ զտնուած ձաւեր : - Դիմակալզորիքիներ  
և երր ձարից : - Ժամանակ անեց յօրինման : - Ասորի բնազիրեն և հայկա-  
կան : - Իրարու հետ համեմատարկիներ : - Հայ յարցիմինքիս մականուիր  
և արժեք : - Մատնեախօսական անդեկտրիներ :

Առանձինն քննադատութեան և մոռզրութեան պրժանաւոր տիեզրէ ունացէ  
սրբանապես որդոյն Յակովուց Մծրեացւ անաւամբ ցոնսութիւնների առ մեջ  
հսկում Զգօն զիրք :

Մծրեայ ուրիք և մեծահռչակ հայրապետին ազգին, տոհմին և ցեղին վրացացինց  
կարծիք և տարածությունը յուզուած են, անսնց ազգական և հօրաքիսորդին կոշելով զնաւ  
որսց Լուսուորչին, և այլոց՝ շընկուանելով այդ ազգակցութիւնն . ոյզ պիտի տարածություն  
նու առ հինոն եղած են, մերոց այդ տահմակցութեամբ թէ որդոյ Լուսուորչին, և  
թէ իրմով քրիստոնական հաւատոց երկնուպարգիւ ժուանդաւթիւնն ստուցով և վա-  
յելող և ազգին պատիւն փափաքելով շանճախէլ : պյանդիփ նշոնաւոր և եկեղեցւոց

պատմութեան մեջ հոչականուն անձի մը՝ որուն դիմաց կը խոնարհէր արքունի ծի-  
բանեօքն և փառք կայրն մեծ կոստանդիանոս, « և հրազդակախօս եղեալ, -ինշ-  
պէս կ'աւանդի ՚ի պատմութեան վարուց Արքոյն, -ասէր ՚ի լուր առակի գահակո-  
ւեալ գրահիցն ։ Երեք սիւնք են ՚ի մէջ ընդ երկինս և ընդ երկիր ։ Անտոն յԵղիպտոս,  
Սեղեստրոս առ մեզ, ուուրբ Յակոբ ՚ի Մծրին քաղաք յԵրկրին Ասորեստանեայց »։  
Բայց որշափ ալ կայց ու կը տեսէր այս տօրաձայնութիւնն, մանաւանդ ՚ի մէջ Հայոց  
և Ասորոց, առաջինքն ամենայն լանք ըրած են այդ փառքը շօտարացընել Հայաստան  
աշխարհի ընդարձակութեան մէջ շատ տեսէր իրեն պատույն վանքեր ու եկեղեցիներ  
կառուցանելով, ու ներբողենիւ, երգովք ու շարականք յաճախելով զդրուատին  
նորա. և իր հին պատմաքրաց մէկն նշանաւոր հնութեամբն ե. ոճոյ գեղեցիութեամբ,  
կը վիայէ թէ « Ումանք հակառակին ոչ ասելով զնա յազգէն արշակունեաց, կամ  
հօրաքեառողի որբոյն Գրիգորի, զոր մեզ սերտ գտեալ և հաւանեալ ՚ի գրոց Ասո-  
րոց ու ։

Այս ինդիրը մեր գրուածքին նպատակէն դուրս է: Ա՞եզի՞համար աւելի հւոսաքըն,  
նականն և հետազօտելի այն է որ նոյն ինդիրք և տարակոյաք եղած են և կ'ըլլան  
իր անունը կրող և հայերէն լեզուով մեզի ժանօթ և սիրելի երկասիրութեանն ալ  
նկատմամբ։

Այս գերբն է, ինչպէս ըսկնք, Զօրոն կոչուած ճառից հաւաքում մը, զոր հինք՝ մաւ-  
նաւանդ մերքն, և երկար գարուց վկայութիւնն և աւանդութիւն՝ կ'ընծայեն Ալժ-  
մացաւոյն. իսկ այլք և առաւելապէս մեր ժամանակաց բարդաւաճ զիտութիւն, ու-  
սումնական հնուազուութիւնք և հնախուզական գիտք Ավրաատայ կամ Փրաատայ  
կու տան: Որպատ ալ բանափրականն նկատմամբ և արդի գիտութեան առջև անհա-  
կառակելի ու անվիճնի երենայ այս կարծիք և ենթագրութիւն, սակայն մեզ հարկ է  
յիշեցնել որ թէպէտ հնագոյն պատմիշ յազգիս թիւզանդ և Խորենացի, Մծրնա-  
ցոյն առաջնի և աստուածականոյ վարուց վրաց կը խօսին, առանց անոր գրաւոր  
երկասիրութեան յիշասակութիւնն ընելու, բայց սրբոյն Յակովրայ վարուց գրիչը  
առ մեզ յայտնի ու բացարձակ խօսքով իրեն կը վերաբեն այս գրուածքը Անոնցմէ  
սոսուգապատում և բաւական հնութիւն ունեցուներէն մին, -ինչպէս կ'ենթագրուի  
գրութեան կերպէն և ոճէն, -կ'ըսէ, թերեւս քիչ մը մթին բացատրութեամբ։ « Այ-  
սուսածային պատմութեանցն հոգ տարեալ, և հնապատմութեանցն կարի յոյժ հմմ-  
տացեալ, զոր յիւր գիրսն իմանի Զգօն կոչեցեալ. զոր յաջորդն ցուցանէ զնսեմուա-  
գոյն տառն որ ՚ի բայցն է»: Նոյնն գարձեալ յընթացս պատմութեան վարուցն. « Գի-  
տակ գրոց կարի վարժ. պարտ է յիւր ինքնախօս գիրսն իմանալ և ճանաչել՝ զոր Ըգ-  
գոն կոչեն. և կարի հմառագոյն գրոց նորա եղեալ վասն լուսաւոր մարգարտացն որ ՚ի  
նմոն խօրագոյն արտաճառի. զոր ապա յաջորդն յիւրում կարգին ՚ի ճառու արտաճա-  
ռէ պարզաբար, եթէ Տէր կամեօցի»: Գարձեալ. « Ազդ եղեւ պանչելիքն առ սուրբն  
Արքուակէս հարազատիւր. բազում պաշտաման արձակէր վասն աշխարհին իրշտու-  
նեաց՝ լուժանել ՚ի կապանաց, և զգիրսն տալ զինդրելին, զոր ինքնախօս արարեալ  
Զգօն կոչեցեալ»: Աստուածաղունը զրոց նախադրութեանց մէջ ալ, -որ ինչպէս ետ-  
քը պիտի տեսնենք, -ազգային զրի երկասիրութիւնք են հաւանականաբար, և հը-  
նութիւնն անտարակուսելի, Եսթերայ զրոց նախադրութեան մէջ կը կարդանք.  
« Իսկ զշաման Ամագովթեանց Ագագեանց, որ էր փառաւոր ՚ի դրան Արտաշիր,  
և կամէր սպանանել զՄուրթիէ և ննջել զշրէայսն, ասէ սուրբն Յակոբ Մծրնայ ՚ի

զիրսն որ կոյի Զգօն, թէ էր Համան Ամաղեկացի յազդէ Ազագայ՝ զօր ապրեցոյցն Սաւուղ, և սպան Սամուէլ։ Եւ զայս կը գտնենք յիշատակուած 'ի Զգօն զիրս, 'ի ճառն երրորդ, Յաղագս պահոց՝ հետեւեալ խօսքերով։ « Եւ ընդէր, սիրելի, խնդրեաց Համան պարզեւ յարբայէ անտի զի կորիցեն ամենայն Հրէայք. այլ զիրէժ որդուց ազդին իւրոյ կամեցաւ խնդրել, և ընչել զանուն որդուց խրայելի, որպէս և նշնեցաւ յիշատակ Ամաղեկաց 'ի ներքը երկնից. և մանցեալ էր Համան մնացորդ Ամաղեկաց ցոյց անտի, որպէս և զիրաւ է. Համան Համբաթեանց մինչեւու 'ի տան թափառութեանց Արշաւրայ արբային էր, պատուական և փառաւորէր»։ Նարեկացին Գրիգոր 'ի ներբողենին առ սուրբն. « Սոփերս օգտակարս և աշխարհակեցոյց մատենագրեաց. որով սահմանաւ կշուռթեան բանի զշարախօսաց բերանմն կարկեաց. և զէերծուածոյականն խիստ դաւանաւթիւն ամենայնի իսկ ըմբերանեաց»։

Ի Լատինաց կը իշխառակէ զՄծրնացին Գեննապիհոս եպիսկոպոս Մասակիից, որ 'ի հինգերորդ դարու. « Յակոր, Կ'ըսէ, որ յորիո՞շեալ էր իմաստուն (Sapiens - Զգօն) եպիսկոպոս Մծրնայ, գրեաց խօսս 'ի քան և վեց զիրս»։ և սրբոյն Հերոնիմեայ եկեղեցական մատենագրաց թուոյն մէջ սնոր յիշատակութիւնը շներլուն գատճառ կու տայ՝ որ գեռ եւս անտեղեակ էր ասորի բարբառոյն Հերոնիմոս երբ այդ երկասիրութիւնը շարագրեց, ուստի գոյն Կ'ըլլայ միայն քանի մը՝ ասորի Հեղինակաց յիշատակութեամբ՝ որոց գրուածք ժանօթէ էն իրեն լատինական թարգմանութեամբ։ Հետեւարար գուրու կը մնայ Մծրնացւոյն անունը՝ որուն գրուածք դեռ ուրիշ լեզուի փոխուած չէին։

Յունաց Ալայագիրը յայտնապէս կը յիշատակեն թէ « շարագրեաց զիրս՝ շայեկանը և օգտակարս», և կ'աւանդեն թէ Թէոդորետոս եպիսկոպոս Կիրիոյ այդ գրուածոց յիշատակութիւնն ըրած ըլլայ իր Եկեղեցական պատմութեան մէջ։

Աւելորդ կը սեպենք թէ՝ ի մեր մատենագրաց և թէ յօստարաց վիպայութիւններ յաճախել, որոց բանք և կարծէիք կուգաձայն և զուգընթացք են ինչուան հիմա մէջ բերուածներուն։ Կը մնայ ուրիշ կարևորագոյն կէտի մը քննութիւն, նոր բանասիրութեան հետակոտութեանց հետեւանք գիւտ. - Մծրնացւոյն այ գրուածքը Աշիրաւտայ ընծայելուն խնդիրը և հաւանականութիւնը։

Հմուտն Յ-Ա. Ասուեմանի՝ մինչ գեռ եւս տեղեկութիւն յունէր թէ սրբոյն Յակովյայ ճառացի թարգմանութիւնք կը գտնուին 'ի հայ լեզուի և 'ի մատենագրութեան, և Մծրնացւոյն թէ՝ անձնն և թէ գրուածոց յիշատակութեան շհանդիսելով առ Հերոնիմեայ, ինչպէս և ոչ առ Թէոդորետոս, Փոտայ և այլոց Յունաց և Ասորոց՝ որ նախքան զէերոնիմոս և յետ նորաւ աւանդեցին եկեղեցական մատենագրաց անուանքն և աննոց ընծայուած երկասիրութիւնքը, ժխտեց Մծրնացւոյն ճառացի գոյութիւնը, և իր Արևիկան Մատենադարանին մէջ յայտնապէս հաշակեց թէ անուանց շփոթու-

1 Jacopo, cognomento *Sapiens*, Nisibena nobilis Persarum modo civitatis episcopus, unus ex numero sub Maximiniano persecutore confessorum, et eorum, qui in Nicæna Synodo Arianum perversitate Omousi oppositione damnarunt. Hunc enim B. Hieronymus in libro *Кропицкому*, velut magnorum virtutum hominem nominans, in catalogo scribarum cur non posuerit, facile excusabitur, si consideremus, quod ipsos tres, vel quatuor Syros, quos potuit, interpretatos in Græcum se legisse testatur. Unde constat, eum illo tempore ignorasse Syram linguam, vel literas.

թենէ յառաջ եկած ենթաղրութիւն մ'է, Յակոբայ Արուճ կամ Արուկեցւոյ գր-  
րուածքն ընծայլով Մծրնացւոյն: Բայց երբ տեղեկացաւ 'ի Հայոց' որ Սարուկեցւոյն  
դրուածներէն որիշ են Մծրնացւոյ ընծայուածներն, որոց այլ և այլ զրչագիրը՝ բաց  
յայլ տեղեաց կը գտնուին ե 'ի վենետիկ առ Մինիթարեսն Հարս, կարծիք փոխեց  
Ասսեմանի և սխալման մէջ գտնուիլը հրապարակաւ ալ յայտնեց նոյն Այրեկիան  
Մատենարաբանին առաջին հաստրոյն մէջ (յէլ յէլ 557): Վկայելով թէ ստուգապէս Մը-  
րնացւոյն են ճառքն. և իրեն այդ կարծիքն ընդունեցաւ Բոյսնեանն Կառնէր<sup>1</sup>:

Նոյն Ասսեմանի վերը յիշուած բազմահմուտ և բազմահաշակ Մատենարան գը-  
րոց երրորդ հաստրին մէջ (Մասն Ա), կը հրատարակէ Լուսուանեսորական  
եպիսկոպոսին յօրինած եկեղեցական գրոց կամ մատենագրաց ցուցակը, որոյ կը  
յիշատակուի 'ամեներմանիկն Ավրաստէս, իմաստունն պարսիկ, որ շարագրեաց  
կրկին հաստոր, ճառու ըստ կարգի նշանագրաց': Զայս ծանօթութիւն տուած էր  
կանքաւ և Գրիգոր Բար-Երրէսո, Եկեղեցական պատմութեան իւրում (Բ. Գրիգ)  
թէ պէտ և փոքրիկ զանազանութեան յիշաէտ-Եշաւայ, հետևեալ խօսքերով՝ 'Ի  
ոյն աւուրս (Պապասայ) եկաց հոչակաւոր իմաստունն պարսիկ, որոյ անուն էր  
Փարհատ, որ զրեաց ճառ յօրդորական, և թողթո (կամ խօսս) քանի ե երկու՝  
ըստ նշանագրաց կարգի': Վրայդ' իմաստուն ասորագէտն անդշացի, որ Ամիրաս-  
տայ գրոց բնագրին առաջնն տպագրութիւն ըրաւ 'Պապասայ համար կ ըսէ թէ ո-  
թերորդ եպիսկոպոս էր Սեւեւկիոյ' որ ըստ Ասսեմանեայ եպիսկոպոսական օժումն  
ընդունած է 'ի թուրն Յունա 577, այն է ամն Տեղառն 266. և ընկեցաւ կամ մեր-  
ժեցաւ յաթուոյն 'ի 637 (326 ամ Տեղառն):

Գրիգոր Բար-Երրէսո նոյն Եկեղեցական պատմութեան մէջ կը յաւելու թէ յեր-  
րորդ դարու յօրուն կեցին և հոչակեցան Աթանաս Ազեքսանդրիոյ, Եւսեբիոս Եմե-  
սացի, Եփրեմ Ասորի, Յուլիփանս Արայիկ Ալբրահամ Գիտունս, « ծաղկէր և Բու-  
զիթիս, իմաստունն պարսիկ, որ էր ուղղափառ. և շարագրեաց զգիրս Ցուցմանց »:  
Ըստ Վրայդ' Բուզիթիս անունն էլլիպակ է գրչագրաց, Փոխանակ գրեց (Ա) Փը-  
րամիթոս: 'Գիգր Յուցման' Կոչուածն ըստ ասորականին կը նշանակէ ժողովածոյ  
կամ հաւաքմունք մը քան և երկու թղթոց կամ խօսից ասորի այբուրենից թուովն  
ու կարգաւ, բաց 'ի վերջն քաններորդ երրորդէն, որ կամ 'ի ձեռագրին, և որ ըստ  
ասորական բնագրին թամառիք կը կոչուին, իսկ 'ի Հայ թարգմանութեամ' ընդհա-  
նուր անուամբ ձաւ:

Անդշացի բանասէրք ոմանք և Հնախայզք՝ պետական օժանդակութեամբ և ծա-  
խիքքի տարի յառաջ՝ ասորական բարբառառով բազմաթիւ կին ձեռագիրք գտան 'ի  
Նիտրիս, և փոխազրեցին 'ի մուսէ ոնն Երիտանական Լնունին: Գերմանացի բանա-  
սէրն Տրլակարտ, ասորի լեզուին քաջահմուտ և հայկականիս ոչ անտեղեակ, 'ի հե-  
ռաւուր արևելից բերուած այդ ձեռագրաց քննութեան պարագելով, գտաւ և հրա-  
տարակեց նամակ մը Գերոգայ ուրուան եպիսկոպոսի արաբացւոյ՝ առ քահանայն  
միայնակեաց Եշուա կամ Յենով անուն՝ բնակեալ Անապ գեղջ. որ փափաքելով ո-  
սաննեւ և գիտել և թէ ով էր կոչեցեալն իմաստուն պարսիկ, զբեր էր առ Գիգոր և  
պիսկոպս խնդրելով՝ որ այս անձին վրայ գիտցածն հալորդէ: Արաբացի եպիսկո-  
պոսն ալ այն նամակաւ հարցասէր խնդրողին փափաքը կը կատարէ: Բայց ոչ ծնըն-

<sup>1</sup> Assemanus, censet ea, quæ in predicto Codice Armeno inveniuntur, genuini  
Sancti Jacobi Nisibeni scripta esse; ego in hac re opinioni illius non adversabor.

գեան տեղւոյն կամ ազգին վրայ, և ոչ ալ եկեղեցական բնչ աստիճանի վերաբերելուն նկատմամբ չի կրնար որոշ բան մը զրուցել։ Կ'երկրայի տարակուանք անոր ՚ի Մծրին քաղաք բնակած ըլլալուն։ և յայտնապէս հաւաստեզք կը ցուցնէ թէ որը բոյն Եփրեմի աշակերտը չէ, ինչպէս ոմանք ժամանակազրական վրիփական մը ունեցեր էին այդ կարծիքը։

Ի ՚Նիտրից բերուած զրչագրաց մէջ և « Ափրաատայիմաստնոյ պարսկի » անունն կրող ճառերը՝ նոյն են արդէն մեզի ծանօթ Մծրնացոյ ընծայուած ճառերուն հետ, միայն թուոյն և գասակարգաթեան մէջ տարբերելով. զի՞ ուր Փրաատայ զիթը և զայն յիշատակողք քանանուերկու ճառու կամ խօս իրեն ընծայեն, ըստ թուոյ՝ ինչպէս կ'ըսեն նշանագրաց (Ասորց), Մծրնացոյն անուռ կրող զրոյ մէջ ճառքն միայն եօթնեւտան են թուով։ Վրայդ՝ որ (ինչպէս ըստնք) Ափրաատայ ճառից բնագրին տպագրութիւնն ըրաւ ՚ի Լոնտոն (1869)<sup>1</sup>, կը համարի որ յասորի զրչագրէն ընծայուած ճառից կամ խօսից մէջ զրոյ ինքն հեղինակն Ընծայուրին եթ կամ Վարդապէտութիւնք կը կոչէ, ինչպէս նաև ՚ի զրչագրին և ՚ի թուոյթն Գէորգայ եպիսկոպոսի, տասն միայն շարագրեալք են յամի 337. իսկ միւս երկուուսան ճառք՝ կրտսերագրյն են ժամանակաւ՝ առջիններէն տասը տարի ետքը. մինչդեռ վերջինն՝ մակագրեալն յասորի բնագրին թէնօիրա տիրօրիրա» յօրինուած է ՚ի 345. Մծրնացին վախճանեալ էր արդէն յամի 338, նախկին ճառից շարագրութենէն տարի մը ետքը. և զոր իրաւամբ զօրաւոր ապացոյց կը համարին քննադապէ, գէթ վերջիններն Ափրաատայ ընծայելու։

### Ո՞վ էր Ափրաատ կամ Փրաատ, « իմաստունն պարսկի »։

Փրիստոնէութեան նախկին գարուց մէջ ոչ անծանօթ էր անունս առ Պարսկիս և առ Հայո (Հրահատ)։ և ասորի հին վկայաբանութեան մը մէջ որ կարծիչ շարագրեալ ՚ի 412, կը յիշատակուի Ափրաատ անունով « հին » պարսկի վկայ մը, յառաջ քան զժամանակ Պար-Սարայի և Շահնդուստայ, որ են իններորդ և տասներորդ եպիսկոպոսունք Սելեսկից և Տիգրոնի և նահաւակեցան ճիշդ այս ատենին՝ յօրում « թմաս տունն պարսկի » յօրինած էր իր վերջին ճառը։ Ձենք կրնար նոյն համարի և զիմաստունն պարսկի ընդ Ափրաատայ զօր կը յիշատակէ թէնօդորետոս յեկեղեցական պատմութեանն, որ փախատեայ երթալով յախարիչէն Պարսից, հաստատեց նախ զբնակութիւն իր յեղեսիա, և ապա փոխադրուելով յԱնտիք՝ տեսաւորեցա հոն արիստան Վաղէս կայսեր հետ յամն 375-377։ Իրեւ սուրբ մեծարուած է յեկեղեցով Յունաց, և իրենց Յայսմաւուրաց մէջ յիշատակուի անունն ՚ի Ֆայումուարի. իսկ ՚ի հառմէական վկայաբանութեան ՚ի ապրիլի Ռմանք կը համարին թէ Ափրաատ նոյն ըլլայ ընդ միում ՚ի վկայից որ Պարսից Շապուհ Բժագաւորին ժամանակ նահաւակեցան ՚ի Պարս, և որ կոչէր նաև Յակոր։ ի ՚Նիտրից յԱնգոյիս փոխագրուած զրչագրաց մէկուն մէջ յիշատակութիւն կ'ըլլայ զնալոից « Մար Յակորայ ի-

<sup>1</sup> The milies of Aphraates, the Persian Sage. Edited from Syriac manuscripts of the fifth and sixth centuries, in the British Museum. Vol. I. Syriac text. Այս գրուածքէն ութ ճառ (Ա, Բ, Գ, Դ, Ե, Ժ, Ի, Խ) համառու յառաջարանով մը Ափրաատայ վարուց և գրուածոց վկայ՝ վերմաններէն թարգմանութեանմբ ՚ի լոյս ընծայեց (1874) հմուտ բանակըն Պիկել (Bickell) ՚ի Մատենադարանի Հարց Եկեղեցւոյ (Bibliothek der Kirchenväter):

մաստնայն պարսկի»։ և ժամանակը կը դնէ յամի 512, որ ամենելին չի յարմարիր Մծրնացւայն։ Վրայդ կը համարի թէ Ավետառու քրիստոնէական սուրբ կրոնքն ընդունելին ետքը սկսած ըլլայ կրել և զանունն թակր, կրօնակիցքն ալ գաղրած ըլլան զինքն առաջին անուամբը կոչելին, և ասոր ապացոյց կը համարի՛ որ 'ի լուսանցս իրմէ հրատարակուած ասորի հին գրչագրին՝ դրուած է և անուն « տիւասն թակորայ »։

Հիմակուան բանափրութեան և քննադատութեանց կարծիք Ավետառու անձին և ժամանակին վերոյ հետևեալին են։ կը ծաղկէր յառաջին կամ յերկրորդ քառորդ շրջարգդ դարուն, հաւանականարար իր ծննանցը գնելով Քրիստոսի 280 թուականին։ որով կրտսերագրյն կը համարուի ժամանական քան զթակոր Մծրնայ, և երեց քան զուորոն Եփրեմ։ Գէորգայ արարացւոյ եպիսկոպոսի վկայութեամբն, զոր քիչ յառաջ յիշատակեցինք, միայնակեաց և կրօնաւոր էր նա, ունելով նաև զաստինան եկեղեցական։ հաւանականարար բարձրացած յեպիսկոպոսական աթոռ, որով կրցաւ 'ի Ուելւկիս և 'ի Ֆիգրն գումարուած ժողովոց հարց հետ բազմիւ յամի 344։ և իր սրբութեան և զիտութեան համբաւովը մեծարուած յամենեցուն, իրեն յանձնուեցաւ ժողովայն կողմանէ շրջաբերական թշթոյն շարագրութիւնը, զոր կը զբանենք նաև 'ի հայ թարգմանութեան (տպ. Հռովմայ յէլ 403)։ որոյ սկրնաւորութիւնն է։ Ավցոր զիտորուուրու 'ի մէջ հասարակաց մոռք, իրը ժողովսալ իցեմք ամենքին ամփոփ միաբանաթեամբ, գրել զթուողթ զայս առ ամենայն եղարան մեր մանկուն եկեղեցւոց որք իցեն ընդ գուառու։ եպիսկոպոսունս, երիցունս և սարկաւագունս, ամենայն ուխտու եկեղեցւոց Ստուծոյ՝ հանդերձ ամենայն ծննդեամբքիւրովք միբելիս և անձկախս, մանաւանդ որ 'ի Ավել (Ավելեկիս) և 'ի Տիազն 'ի մէր աստուած կենարար 'ի մեր, որ ձեռն Քրիստոսի իւրոց կեցոյց զմեզ և մերձեցցց զհեաւաւութիւն մեր առ իւր, որոց ամենեցուն ոզչոյն յցից « Այս կերպով եպիսկոպոս մը միայն կրնար խօսիլ և գրել, ինչպէս նաև երբ կ'ըսէ « Վասն ձեռնադրութեան զոր ասնուն 'ի մէն մարդիկ », որով հաւանականութիւն կ'առնու բանափրաց ոմանց ենթագրութիւնն՝ որ եպիսկոպոս և առաջնորդ կը համարին զնա ՚ի վանս Ս. (Մար) Սատթէր։

Այս կարծիքը կը հաւատարմացընեն անշուշտ տանեներորդ ճառն վասն նովրաց և անոր պարունակութիւնն, որ կը պակսի 'ի Գեննադեան ցոցակին, և ամրող է 'ի մերն և յասորին։ իր թշթոյց կամ խօսից ժամանակը նշանակած կամ ճշդած չէ Ավետառ։ և զոր կարելի է թերեւս ենթագրութեամբ գուշակել հայելով 'ի ժամանակն յորում ասրեցաւ, և 'ի բանիցն յոր ակնարկութիւն կ'ըլլայ հալածանաց զոր կրեց եկեղեցի։ Յանձնիր խօսերն ուղղուած են ընդդէմ Հրէից, և որք անշոշտ իր պիսաւոր ընդդիմամարտին էին, ուուն ուրեք յիշատակութիւն կ'ըլլայ հերձուածոց որք տառապեցուցին զնախնական եկեղեցի, « 'ի սուտ վարդապետութեան և յանօթու շարին», ինչպէս կ'ըսէ « օրինակ, յերրորդ ճառին կը յիշատակէ զՄարկիոն, զՎաղենտինոս, զՄանիկեցիս, զորդիս խաւարին, զվարդապետութիւն շարին Մանեայ, որ բնակէ 'ի խաւարի նման օձից, և առնէ կախարդանս « կրօն բարելոնի »։ Արիս մի՞ որ իր գարուն զիմսաւոր հերետիկոսապետն էր, և 'ի Նիկոյ ժօղովոյն՝ յորում էր և սուրբն Յակոր Մծրնայ, դատապարտեալ մերժեցաւ՝ ամենելին յիշատակութիւն շըներ, որով մարթ է ենթագրել թէ այն գաւառաց մէջ որ Ավետառու հոգեւոր տեսպիթեան և խնամոց յանձնուած էին։ Արիսի վարդապետութիւնն դեռ մուտ գուած կամ արմատացած չէր։

Սորի բնագրին մէջ շնչք տեսներ այն թուղթն՝ իրու թէ գրուած 'ի Գրիգորէ Լուսաւորչէ առ սուրբն Յակոբ Մծրնայ, զրբ անի հայերէն օրինակն հետևեալ խռարգրով' ։ Թուղթ սրբայն Գրիգորի մերոյ Լուսաւորչին՝ առ սուրբն Յակոբ Մծրնաց եպիսկոպոս»։ Ու մեք, և ոչ այլ ոք՝ հմտագոյնք և բանիրունք, պատճառ կամ պատշաճնորին մը շնչք տեսներ այս թղթոյն։ Ենթադրելով ալ, ընդդէմ գրեթէ ընդհանուր և ընդունելի կարծեաց արդի բանասիրութեան, որ Մծրնացւոյն հարազատ երկասիրութիւնն ըլլան այս ճառք, Լուսաւորիչ Նիկոյ ժողովքէն քիչ ետքը կատարեց իր աստուածահանոյ կենաց և առաքելութեան ընթացքն, յերկնաւոր հայրենիսն փոխադրուելով։ և որ զրպանդակ աշխարհն Հայաստանեաց լուսաւորիք էր աստուածահրաշ վարդապետութեամբն, չբր կրնար կարօս ըլլալ այնպիսի ոճով աղեր կամ խնդրուածք մը յայտնել սորվիլու ամենիմաստն և աստուածուասոյց։ Այսպիսի անպատշաճութեան մը վրայ յիրաւի տարակոյս յայտնելով լատին թարգմանիչն՝ 'ի ծանօթութեան իրում տպագրին կ'ենթագրէ', - անշոշտ պարզ ենթադրութիւնն մը ըրած ըլլալու համար, - թէ սուրբն Գրիգորիս Աղուանից եպիսկոպոսն ըրած ըլլայ այս խնդիրը Զէ հաւանութեան և ոչ այս կարծիք. զի որպէս արրոյն Լուսաւորչին, առ ասնկ և ոչ իր աստուածարեալ և սրբասուն թուան, որուն ընդարձակ աշխարհի մը հովուութիւնն հաւատացուած էր, կրնանք պատշաճեցնել հետևեալ խօսքերն, « Յօ, ռաջ քան զամենայն ինչ, որ կարի պիտոյ է ինձ գրեսցես և խելամուտ արասցես զիս վասն հաւատոյ մերոյ, թէ զիսրադ իցէ, և որ հիմն նորա, և որպէս շինուած շինինա, և որպիսի իրօք հաստատի, և որպիսի գործք պիտոյ են նմա։ Այլ ես ոյսաէտ եմ հաւատացեալ, թէ միայն իցէ Աստուած որ արար զերկինս և զերկիր 'ի սկզբանէ, և զարդարեաց զախարհս կազմուածով իւրով... Ցայսմ ամենայնի, եղրաց, եռ այսպէս հաւատացեալ, աղասիմ զքեզ զի գրեսցես և խելամուտ արասցես զիս, թէ որպիսի գործ պիտոյ է այսմ հաւատոյ մերոյ, և հանգուացես զիս»։

Աւելորդ է անդրադարձնել, ինչ որ ողջամիտ ընթերցողին արդէն քաջայաց Ֆ, թէ անհարազատ է այս թուղթն, և անուան զարմանալի փոփոխութեամբ մը՝ սրբոյն Գրիգորի մեծարոյ և նուիրական անունն մւտ գտեր է. և 'ի գրչաց իրարու աւանձ դուելով այնպէս հասեր է մինչև առ. մեզ։ Հաւանական կարծեազ Գրիգոր անունով մէկը եղած է խնդրող ճառքին, որ յետոյ շիփութեր է ընդ անուան Լուսաւորչին։ Ասորի բնագրին մէջ ալ շգտնուիլը՝ յայտնի ապացոյց մ'է եկամուտ ըլլալուն։ Եղնապիսի գրիպմամբ յումանց 'ի մերոցն, ինչպէս վերը տեսնեք, սուրբն Արքատակէս կարծուեր է ինդրող ճառքին։

Առաջին ճառը, ընծայականէն անմիջապէս ետքը, առ սուրբն Գրիգոր ուղղուած վերնագրով մը կը սկսի, և որ բնականարար կը պակսի յասորի բնագրին։ Արրոյն Յակոբայ Մծրնայ եպիսկոպոսի, պատասխանի թղթոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։ Ասորականին սկզբնաւորութիւնն է. Ընծայութիւն առաջին, վիսն Հաւատոյ։

<sup>1</sup> Յէլիքսնեզ, Հայագէտն և ասորագէտ պեճիացի, իր նոր մէկ հրատարակութեան մէջ (L'Arménie Chrétienne) կը գրէ. On avait imprimé en 1756 la version arménienne d'un vingtaine d'homélies attribuées à St. Jacques de Nisibe avant d'en retrouver et d'en publier l'original syriaque. Ces homélies portées au nombre de vingt-trois, ont été restituées à leur véritable auteur, Aphraate, dit le Sage Persan, moins et peut être évêque du IV siècle, originaire probablement d'un pays situé aux frontières de la Syrie et de la Perse.

Այս ճառք՝ որ ըստ մեծի մասին իրարու հետ կապուած ու ներքին վերաբերութիւն ունին, նամակի ձևով յարադրուած են, և նպատակնին է քրիստոնեայ եկեղեցւոյ վարդապետութեան դրութիւնն ու պաշտպանութիւնը: Գլուխաղիսու, ինչպէս յառաջադրութիւնը յիշեցինք, Ածքնացւոյն ընծայուած երկասիրութեան խօսքն կընէ, մէջ բերելով նաև զգլամակարգութիւնս ճառքիցն, որ մասամբ կը տարբերին 'ի հայկականէն: Ժիշա այս վերնոյն մէջ կը գտնուին անսիլիք' որ պակասին 'ի գեննադեան ցուցակին, ինչպէս նաև ճառք՝ որ միայն ասորականին մէջ կ'երևնան: Հետաքննականէն կը համարիմք այս երեքին գլխակարգութիւնն իրարու գիմաց նշանակել աստէն:

### ՀԱՅ

### ԳԼԵՆԱՌԴԵԱՆ

### ԱՍՈՐԻ (Վ. Պ. Պ.)

Ա. Վան Հաւատոյ .	Վան Հաւատոյ .	Ընծայութիւնք Հաւատոյ .
Բ. Վան օրինակ սիրով .	Վան սիրոյ և առանձին սիրով ըստ ընկերին .	Վան սիրոյ .
Գ. Օրինակ պահոց .	Վան պահոց .	Վան պահոց .
Դ. Օրինակ աղօթից .	Յաղագոս աղօթից .	Վան աղօթից .
Ե. Օրինակ պատերազմի .	Վան թագաւորին Պարսից և Հալածանաց քրիստոնէից .	Վան պատերազմաց .
Զ. Օրինակ ուժառաւորաց .	Յաղագոս համբարձութեան .	Վան կրօնաւորաց .
Է. Օրինակ ապահարութեան .	Յաղագոս ապահարութեան և Հաստուցման .	Վան ապահարութեան .
Ը. Վան յարութեան մեռն .	Յաղագոս յարութեան և հանու դիմակոց .	Վան յարութեան մեռնելոց .
Թ. Վան խոնարհութեան .	Յաղագոս խոնարհութեան .	Վան խոնարհութեան .
Ժ. Վան հովուաց .	(Պատառք )	Վան հովուաց .
Ճ. Վան թվասութեան ընդգետմ Հրէից .	Վան թվասութեան .	Վան թվասութեան .
Ճ. Վան շաքաթու ընդգետմ Հրէից .	(Պատառք )	Վան պատերին .
Ճ. Օրինակ ցուցանելի վասն ընսրութեան կերակոց .	(Պատառք )	Վան ցուցանուու .
Ճ. Վան զատկաց .	(Պատառք )	Վան պատճառաց (հրմաւածոց) .
Ճ. Վան հեթենուաց մոռաւ ներդ հեթանուաց , Վան դարձի հեթանուաց ,	Վան հեթանուաց որ են փոխանակ ժողովրդեան Հրէից .	Վան հեթանուաց .
Ճ. Վան փոխանակ ժողովրդեան Հրէից .		
Ճ. Ցուցանի թէ Քրիստոս է ՋՔրիստոսէ, զի որդի է Աստուծունը .	Վան Քրիստոսէ, զի որդի է Աստուծունը .	
Ճ. Աստուծուն .	առջոյ համակոյակից Հրէ .	Աստուծուն .
Ճ. Օրինակ ցուցանելի ընդ .	Յաղագոս կուսութեան և սրբութիւն Հրէից՝ վասն կուսութիւն Հրէից՝ վասն կուսութիւն .	
Ճ. Վանդիմանութիւն ընդ .	(Պատառք )	Ընդգետմ Հրէից՝ զի ասեն թէ կայ մեղ ժողովրդիւն .
Ճ. Վանդիմանութիւն ընդ .		կայ մեղ ժողովրդիւն .

Գլխակարգութեանց ցուցակէն կ'երևնայ որ առաջին տամն ճառք կը պատկանին քրիստոնէական հաւատոց և առաջինութեանց, և այն բարի գործոց որ անկատեցարեւը են 'ի հաստատել 'ի նոյն հաւատու և 'ի պատրաստել: Ածքայն ճառն հինգեւ-

րորդ, որ Օրինակ պատերազմի կամ ըստ Գեննադիոսի վասն բագաւորին Պարսից և հայութանաց բրիսոռնեկից մակագիրն կը կրէ, որիշ նպատակով յօրինուած կ'երեւնայ: Ասօեմանի այլարանական նկարագիր մը կ'ուզէ տալ՝ իրրու հոգեւորական մարտի: (Մատենադ. արևելիան. Ա. 557): Բայց Ափրաատ անշուշտ սոյն ճառով՝ Պարսից Շապուհ Բ թագաւորին ընդդէմ կոստանդիանոսի Մեծին տուած պատերազմը կ'ակնարկէ, և իր բարեկամ կայսր՝ եղած շարեաց վտանգներուն հոմար սփոփելու գիտմամբ կ'ուզէ ապացուցանել թէ ՚ի Պարսից շաղթուեցան Հոռվմայեցիք: Եւ որպէս զի այս գերջիններու ցուցուած յայսնի բարեկամութենէն քրիստոնէական կրօնից նոր վնասակարութիւնը չերեւնան ՚ի թշնամութենէ Պարսից, ոչ զԵապուհ և ոչ զՀռոմայնեցիս իրենց բռն անուամբ մէջ բերէ: այլ գանիկեան մարգարէութեանց խօսերով՝ խոյի պատկերով զԵապուհ կ'ակնարկէ, և ըորրորդ գազանն ըսելով զՀռոմայի կ'իմանայ:

Հետուորդ երկուտասան ճառից (ԺԱ.-ԻԳ) յօրինման մէջ Ափրաատայ գլխաւոր դիտումը կ'երեւնայ քրիստոնէական կրօնքը ու անոր եկեղեցական արարողութիւնները պաշտպանել ընդդէմ Հրէից, որք ՚ի ժամանակին յԵղեսիա, ՚ի Մծրին, ՚ի Նուհատրա և և յայլքազաք մերձաւորս բնակութեան Ափրաատայ՝ մեծ յաղողակարթեամբ կը պարապէին յուսումն սրբազն տառից: քրիստոնէից դէմ մաքառելու վսիմանաւ: Ինքն Ափրաատ ալ՝ Հրէից բարունեաց հետ վիճաբանութիւններ ունեցաւ, ինչպէս կ'ակնարկուի ՚ի սկիզբն քանաներորդ երրորդ ճառին. և բովանդակ զրոց մէջ մեծ հմտութիւն կը ցուցընէ երրայական աւանդութեանց: Խակ ճառն յորեքուասներորդ՝ (կամ իննեւտաներորդ ըստ հայկականին), յօրինուած չերեւնար յընդէ գիմադրութիւն Հրէից, այլ ՚ի հաստատութիւն խաղաղութեան յեկեղեցւոյն Քրիստոսի. - զոր մնէարազատ կը սեպէ տպագիրն Հոռվմայ. - և երկմտութեան գիխաւոր պատճառ զայն կը սեպէ, որ անոր յիշատակութիւնը չկայ ՚ի գեննադեան ցուցակի ճառից Մծրնացւոյն: և երկրորդ՝ որ ոճը բոլորովին տարրեր է ուրիշ ճառերէն: և այս պատճառու ընդօրինակողն խակ տարակոյս ցուցընելով անոր հարազատութեանը վրայ, ամենէն վերջ կը յեռու զայն՝ նախընթաց մանաւոր յաւելուածով մը ակնարկելով գաւարառումն ճառից հայրապետին Մծրնայ: Ասոր վրայ կրնանք, Կ'ըսէ, յաւելու և զայն՝ որ ժողովական թուղթ մի է, և յանուն բազմաց գրուած, և ոչընկ սրբոյն Ցակիվայ:

Եւ յիրաւի, այս ճառերէն ետքը կը յաւելուն հայերէն թարգմանութեան օրինակը քըն. « Աւարտեցան պատասխանական թուղթք սրբոյն Ցակովրայ Մծրնայ՝ առ տուրքըն Գրիգոր Լուսաւորիչ »: Ապա կը դրուի վերը յիշուած ճառ, կամ շրջացական ընդդրանակ թուղթն ՚ի զիմաց եպիփուացան գումարելոց ՚ի Սեւեւկիա և ՚ի Տիղրան, այսպիսի խորագրով. « Վասն հակառակութեան և հերձուածոց որք լինին ընդ գաւառու ուրեք: Եւ վասն հապառութեան և ամբարտաւանութեան, և վասն մարտի մաքառման բարձրաձգութեան գիխաւոր իշխանութեան »:

Խակ ասորին հրատարակեալ՝ կ'ըրայդէ կը յաւելու յետ իննեւտասներորդին՝ ճառ

Դ. Վասն պահպանելոյ գկարօտեալս:

ԻԱ. Վասն հալածանաց:

ԻԲ. Վասն մահու: և վասն յետին ժամանակաց:

ԻԳ. Վասն հատոյ խաղողոյ:

Մեր ինչուան հիմա ըստածներն թէպէտ և փափաքելի լոյս մը չ փռեն խնդրոյն էաւ կան մասին վրայ, այսինքն՝ Մծրնացւոյն թէ Ազրաւասոց վերագրելու է զայս աշխատառթիւն, — ուեղի մարզվ գենե և ով վիճից կամ երկրայսութեանց, — բայց զրուածքին յասորականէն 'ի հայ թարգմանաթիւնն անտարակուօելի պէտք է սեպափ խօսից և, ոներու կերպէն, և մանաւանդ 'ի թառ յասորական հնչմանց յատուկ անտանց։ Այս ասորի թառ հնչմանց թէպէտ և կը հանդիպինք երթեմն նաև 'ի թարգմանութեան սրբան Եփերմի գրուածոց, բայց Զգմն զրոց մէջ յանձնագույն յօրդութեամբ. այսպէս Յահազ Յամեղեան փոխանակ մեղի աւելի ընտանի հնչմանք ըսելու՝ թէու որդի Ամեսաեայ. — Հափատեանց = որդի Սափատոյ. — Սաոր = Աքասար. — Վաշթեաց տիկին = Ասթինէ տիկին. — Ծաոր = Սեգոփր. — Խոզդէ = Ուզգան։ — Ան այէլ կին Որարայ = Յայել կին Գաբրեայ, և այլն։

Ոմանք թէրեւս ուրեմնան ենթազրել թէ սկզբնագիրն ասորի լեզուով շարագրուած ըլլան ընկունելովալ, կարելի է դարձելու հւզնակ սեպել զՄծրնացին, որ անշուշն ատեղեակ էր ասորականին, և կրնար յառաջապայն Հրահատ (Ափրաւատ) կրոսկիլ, ու յասոյ եկեղեցական պարտաւանդ բարձրացած տունն 'փիփիլ զնուունն 'ի Յակոր. և այնպէս միացնել այս երկու անձնելքը. մանաւանդ որ Բիզանդայ աւ անէն ալ պարսիկ Համարաւած ըլլան կ'ուսանինք 'ի պատմութենէ նորա. « Զայնու ժամանակաւ, կ'ըսէ, խաղաց գնաց մեծ եղուկուպան Մծրնացւոց, այր պանչելի ծերունի, վաստակասէ՛ ի գործ հմարութեան, որում անուն Յակոր, փիփանակ ազգան պարսիկ կոչէր »։ Վարդանյա պատմըշի հետեւոյ խօսքերն ալ՝ շնչն գերծ 'ի կարեւորութենէ. « Ոմանք ասեն Զգօն ոմն Կոչեցեալ Յակոր, թէ նա է եղրայր Գրիդորի, բայց Յակոր որդի է քեռն Անսակայ՝ Խոսրվուհեաց, որ էր կին Տիրանայ արքայի զոր սուս՝ թագաւորն Լինաց Ասդէս. և Յակոր առեալ զբոյր իւր զԱստեն՝ որդւովն իւրով Հրաշչիւ զինի մահուան ծնողացն գնաց յերկիրն Գթաց, որ և Թագաւորեաց Հրաշչին 'ի բարի պատահմանէ ։»

Հայ թարգմանութեան ուրիշ հետապնդական կէտն ալ՝ 'ի Առորբ զրոց զործածած ընթերցուածոց մեծ տարբերութիւնն է՝ մեղի ծանօթ ընթերցուածներէն։ Ասոր հաւանական պատճառ կրնայ ենթադրուիլ որ թարգմանութիւնն երէց ըլլաց ժամանակաւ քան զԱստուածաղունչ զրոց 'յօրինակէ Հօթանասնից, այլ հետեւողաւ թեամբ նախնականին որ եղէ 'ի սրբոյն Սահակայ։ Վանի մը օրինակ մէջ թերենք 'ի հաւատարմանը մեր խօսքին, առջի ճառէն քաղելով։

#### ԸՆԸ ՄԵՐ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆԻԹԵԱՆ

#### ԱՐ ՄԾԲՆԱՑԻԱՑ

Հանիք զվէ՛թ ժառանգութեան, զԱւատարութիւն նորեան նորէն նուս. (Զաք. Գ. 8. 8.): Լուսուար արարէք ձեզ զվար զիստութեան, իւր զրիշէք զՏէր. (Աւա. Ժ. 12.): Եղիշի յաւուր յախմի, ոչ եղիշի լսու. և յուրու և պարզ եղիշի որ մի. և օրի այն յայրնի տեսան, ոչ ամի իցէ և ոչ գիշէր. և թե երեկո եղիշի լսու. (Զաք. Գ. 9. 9.): Եւ թինէն ձեռքն Սովորի հաստատէլք 'մինչ յետունել արեկական. (Եպ. Ժ. 22.): Արգարութեան անսացեալ և ոչ մեկիշցաց. զի ոչ գիտիմ զանձին գործեալ զանպատէն. (Յուլ. Խ. 5.):

Տիսի են զվէ՛թ հաւատարութեան։

Լուրէք ձեզ ճրագ, և խնդրեցէք զՏէր։

Եղիշի յաւուր յայնմիկ, առէ Տէր, շիշուցից զարդակին 'ի միջօրեայ ժամանակի. և խաւարեցաւ երկիր յաւուր լուսա։

Հաւատով տարծեալ կային բազուկին Մովսէսի միեւն զմունքնեւ արեգական։

Զանձուութիւն իմ եռ յինէն որ, մերժեցի. և 'ի չըմարութիւն հաւատաց իմոց հաստատեալ կայցիմ։



Այս տարրերութեանց խնդրոցն վրայ՝ քիչ եաթը նորէն խօսելու տոհիթ պիտի ունենանք, 'ի պատմութեան թարգմանութեան Աստուածաշունչ զրոց:

Սրբահօս զիսութեան համար թերեւու ոչ անկորեւոր մեղուք նշանակել՝ որ վկայութիւն բերուած գիրք 'ի հին կտակէն՝ են հինգ գիրք Մովսիսի, Եկոտ, Դաստաւորք, չորս Թագաւորութիւնը, Եզրի յերկորդ գրոց միայն, և այն մէջ կլայտութիւն եւեթ (Ա. 3), Յոր, Ասղմոս, Առաքե, Եսայի, Երմիքա, Եղեկիէլ, Դանիէլ, Ովաէ Յովիլ, Ամուս, Յովանն, Միքէ Նաւում, Սոփոնիա, Անդէու, Զաքարիա և Ամազգիա: Խոկ 'ի նորոցն՝ չորս Ա: Ետարանք, և 'ի Պաւլոսի թղթոցն՝ առ Հռովմացեցին, առ Կորնթացին առաջին երերորդ, առ Գաղատացին, առ Եփսիսացին, յառաջին թղթոցն առ Թեսաղոնիկիցին, յառաջին թղթոցն առ Տիմոթէոս, առ Հերքանցին, և յառաջին թղթոցն Յովհաննու: Այսակա մի ըստ միոչէ նշանակուած կը գտնենք 'ի տպագրին Հռովմայ ( 'ի հայ և լատին):

Հայ թարգմանից մեծ հմտութիւն կը ցուցնէ տառականին, և ծայրագոյն ճնշութիւն իր բնիկ լեզուին մէջ, այնպիսի ոճեր և դարձուածք գործածելով՝ որ այս վերմոյս յատուի են, և կը պակսին 'ի բնագրին: Կը գտնուին փոխագրութիւնք՝ թէպէս և սակաւաւորք թուով, սիսալ ընթերցմամբ բնագրին. և թէպէտ ամենայն փոյթ և խնամք կը տեսնուի 'ի հաւասարմութեան, բայց թարգմանիցն կը գործածէ երրեմ նուև զազատութիւն՝ 'ի համառօտել կամ յընգլանել զրանս և զիմաստո բնագրին: Այսպէս ուր ասորին մէկ բառով մը միայն գոհ կ'ըլլոյ, հայն կ'ըսէ. յինէն պասի, և իրի վրանց տանեայն յինուածն պասիկ և կատարի. մարդ որ փաստոր և պատուական. — վասն տեսրինաց և ամբարշտաց, և այն: Աւտոնցմէտ աւելի երկարագոյն յաւելուածք՝ խօսքին իմաստը պարզագոյն և դիւրըմբռանելի ընելու դիմամմբ՝ կը գտնուին 'ի հայ թարգմանութեան, և զօրս աւելորդ կը համարինք մէջ թերել: «Խանակնենք միայն հոռիմէական տպագրին և Վրայդի հրատարակութեան համեմատական հիերը (20=9-11)-(42=8-11)-(78=10-14), 'ի հաւասարմութիւն մեր խօսքին: Տեղ տեղ ալ համառօտուած կը գտնենք 'ի հայ թարգմանութեան ասորականին խօսքերը. վասն զի ուր բնագրին կ'ըսէ (Վրայդ. 196).» Յովսէփ ընտրեցա 'ի հօտէ ոչխարաց իշխան լինել 'ի վերայ Եփիպտացւոց 'ի ժամանակի նեղութեան. Մովսէս 'ի հօտէ ոչխարաց, զառել զժողովուրդ իւր և հովուել, և Դաւիթ 'ի հօվուր թենէն վերաւել յառաջնորդութիւն և 'ի թագաւորութիւն 'ի վերայ Խարացիի... և Մովսէս ոչ դարձ արար միւսանգամ առ ոչխարս իւր, և ոչ եթող զհօնս հաւատացեալ նման. Նոյնպէս և Դաւիթ ոչ եւո յաւելցոյր գտնալ առ ոչխարս հօրն». Հայ թարգմանիցն հետևեալ խօսքերան մէջ կ'ամփոփէ այս իմաս: ը (Էջ 386 ըստ տպագրին Հռովմայ). «Յովսէփ, Մովսէս, Դաւիթ 'ի խաչանց անտի ընտրեցան առաջնորդել ժողովրդեան. և ոչ դարձան առ խաչինս անբանս»:

Ասորէտոք՝ բնագրին ու հայ թարգմանութիւնը իրարու հետ բաղասած ատեննին, յաճախ ընտրեալացոյն և իմաստից աւելի պատկանաւոր կը գտնեն զմերն, և բազմութիւ օրինակներով կը հաւատարմացընեն զյս:

\* Ասորէտոք բնագրին ու հայ թարգմանութիւնը իրարու հետ բաղասած ատեննին, յաճախ ընտրեալացոյն և իմաստից աւելի պատկանաւոր կը գտնեն զմերն, և բազմութիւ օրինակներով կը հաւատարմացընեն զյս: Prolegomena in Aphraatis Sapientis Persæ Sermones Homileticos. — Dissertatio inauguralis quam ad summos in philosophia honores ab amplissimo Ordine Philosophorum Lipsiensi rite impetrando scriptis C. I. Franciscus Sasse Rheinensis (1878). Մէկ այս հմտական գրուածքէն օգտուեցանք: Ափրատասպ ընծայուած համառօտ տեսութեանն մէջ:

իսկ եթէ հետեւելով եւրոպական բանափրութեան, Ավրաստույ երկասփրութիւն սեպենք այս ճառ երը, - առանց կարող ըլլալու ճշգել հայ թարգմանութեան ժամանակը, - հուսոնականարար՝ նկատելով լրջակին ոճը և հանգամանքը, թարգմանչաց ժամանակին կրնանք վերապրել զայն, որով ՚ի վարդապետաց իւրեանց առաքեցան յեղեսիս և պղուր՝ ՚ի կողմանու Աւորուց. և ինչպէս սրբոյն Եփրեմի, տանկ ալ Ավրաստույ ճառք այն առթով և ՚ի նմին ժամանակի թարգմանեցան ՚ի հայ, ՚ի կէս կամ յառաջին քառորդի հինգերորդ զարու:

Մծրնացւոյն ընծայաւած այս երկասփրութեան մեզի ժանօթ գրշապիրք են՝ հինգ ՚ի Մատենադարանին Էջմիածնի (ըստ տպագիր ցուցակին). յորու հնագոյնք ՚ի ՌՃԹ և ՌՃՒԹ թուակուններու. իսկ միւս երեք անթուակունք և նորագիրք: իսկ ՚ի մերու մըս հինգ օրինակիք. յորոց մին նոտարացից գրչութիւն Վարդան եպիսկոպոսի Յունանան, անհարազար, և որոյ վրացին եղած է տպագիրն Հռովմայ, առ ՚ի զգոյէ յայն ժամ ընտրելագոյն օրինակի: Երկրորդ օրինակն է բարդագիր, և միայն ինն ճառք. և վերջինն թերի. ընտիր գրչութիւն, բայց առանց յիշատակարանի: Միայն նշանակութեան արժանի է որ ՚ի գլուխ գրոցն առաջին ճառից՝ պակասին վերնագիրք Լուսաւորչի ենթադրուած աղերսականն թղթոյն առ Յակոբ Մծրնայ, և սորոյս առ սուրբն Գրիգոր: Օրինակն երրորդ՝ գաղափարեալ է յընտիր և ՚ի զգուշաւոր բոլորագիր օրինակէ, որ կը պահուի, - ՚ի ըսկ ընթօրինակողն. - յեկեղեցով Աստուածամօր ՚ի Ղորաստ Տաւրիոյ, և կը բովանդակէ զինն ճառու ևեթ. և ՚ի սկիբրն ճառիցն այսպէս կը նշանակուի, « Խօսք սրբոյն Յակոբոյ Մծրին քաղաքի եսիսկոպոսի... (ցեցակեր յօրինակին) սրբոյն Գրիգորի Պարքեւան տոնինին. յաղագս օրինակաց հաւատոց, առ ՚ի զգացորիէն պատցորեան ժարաւրելոց կառարկցաց վասն հաւատոց օրինակի սիրոյ ՚ի բանն տեսան, օրինակ Հաւատոց »: Զեռազրին մէջ տեղ տեղ կը յանձնուի յիշել « զԱւրդան վարդապետ զբաղվեցի, և զայշկերան իւր զԱրրահամ վարդապետ զՀամթերի. և զՊօղոս զրիչո » առանց ակնարկութեան թուականի: Երրորդ օրինակն է նոտարագիր, ուր ՚ի վախճան վերջին ճառին նշանակուած կը զըտնենք. « Գրեալ է թուղթս այս ՚ի քաղց ամսեան, որ ամ ՈԾԵլ էր թագաւորութեանն Աղեքսանդրի որդու աղիղովկեալ Մակեդնացուց, և էր ամ երեսուն և հինգ Կապհոյ արքայի Պարսկց » . - 344 թուական Գրիտասոսի: իսկ միւս օրինակը են նորտգիրք. կը գտնուին նոյն ճառք կամ ճառու ամբ յառաջակաք ուրիշ զրոց մէջ:

Երկու տպագրութիւնք եղած են Մծրնացւոյ կամ Ավրաստույ ընծայուած ճառից թարգմանութեանն ՚ի հայ, ՚ի Հռովմ (1756) և ՚ի Պոլիս (1824): Որշափ ալ այս վերջինս ընտրելագոյն ըստ ընթերցուածոց, բայց տպագրաց ու ձեռագրաց բաղդատութեամբ նոր հրատարակութիւն մը ցանկալի ու փափաքելի է բանափրաց. զամ igitur, ՚ի ըսէ Սասու քիչ յառաջ ՚ի ժանօթութեան յիշուած երկասփրութեան մէջ, (յէլ 33), textus noster armeniacus erroribus ac mendis tali modo sit deformatus, magnopere optandum est, ut caris Mecchitaristarum quorum de literis armeniacis merita immortalia sunt, nova eius editio ad archetypum Siriacum potissimum emendata in lucem prodeat.